

«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր



«Հաստատում եմ»

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի

Տնօրեն՝ _____ Աշոտ Ալիխանյան

« »

2020թ.

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Բովանդակություն

1. Ներառական կրթության փիլիսոփայությունը
2. Ներառական կրթության նպատակը
3. Ներառական կրթության խնդիրները
4. Ներառական կրթության սկզբունքները
5. Կարիքների գնահատման, խոչընդոտների բացահայտման և հաղթահարման մեխանիզմները, ընթացակարգերը և պատասխանատուները
 - ա. Մանկակրթարան
 - բ. Կրտսեր դպրոց
 - գ. Միջին դպրոց
 - դ. Ավագ դպրոց
6. Օժտվածություն
7. Ներառական կրթության քաղաքականության փաստաթղթի վերանայման և շահագրգիռ բոլոր կողմերի համար հասանելի դարձնելու ընթացակարգերը
8. Գրականության ցանկ
9. Հավելվածներ



1. Ներառական կրթության փիլիսոփայությունը

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը իր գործունեության շուրջ 30 տարիների ընթացքում առաջնորդվել է իսկական մտավորական և քաղաքացի կերտելու առաքելությամբ, որը կրում է ազգային հենքի վրա հիմնված համամարդկային արժեքներ: Շիրակացու ճեմարանն այդ տարիների ընթացքում իրականացրել է իր հեղինակային ծրագիրը (գրանցված է Հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում՝ թիվ 7/13, 01.03.2002թ.), որի նպատակը օժտված սաների բացահայտումն ու նրանց կրթության կազմակերպումն է: Ճեմարանում սովորում են ավելի քան 1200 սան (3-18 տարեկան), որոնցից յուրաքանչյուրի ներուժի բացահայտումն ու ինքնահրացման հնարավորությունն առանցքային է կրթարանի գործունեության կազմակերպման գործում: Ներառականության քաղաքականության իրականացման հիմնական գրավականը յուրաքանչյուր սանի նկատմամբ կիրառվող անհատական մոտեցումն է՝ նրա կրթության գործընթացներում խոչընդոտները բացահայտելու և դրանք վերացնելու համատեքստում: Ճեմարանը մի այնպիսի կրթական միջավայր է, որտեղ կարևոր է յուրաքանչյուր սովորողի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, որի ուղղությամբ տարվող աշխատանքների հենակետը սովորողի ուժեղ կողմերն են, նրա ձեռքբերումները, հետաքրքրություններն ու առանձնահատկությունները:

2. Ներառական կրթության նպատակը

Ներառականությունը շարունակական գործընթաց է, որի նպատակը մի կողմից՝ յուրաքանչյուր սովորողի ներգրավվածության աստիճանի մեծացումն է, իսկ մյուս կողմից՝ ուսումնառության գործընթացի հասանելիության ընդլայնումը բոլոր սովորողների համար: Կրթության կազմակերպման գործընթացներում որքան բազմաթիվ և բազմաբնույթ խոչընդոտներ է կարողանում հաղթահարել դպրոցը, այնքան ավելի հասանելի է դառնում իմացական, հուզական, անձնային, ֆիզիկական տարբեր առանձնահատկություններ, բազմազան հետաքրքրություններ և նախասիրություններ, գիտելիքի և հմտությունների զարգացման տարամակարդակ սովորողների համար:

3. Ներառական կրթության խնդիրները

Ներառական կրթության փիլիսոփայությանը հավատարիմ մնալու և ներառական կրթության նպատակը իրականացնելու համար ճեմարանական համայնքը պետք է շարունակաբար լուծի իր առջև դրված հետևյալ խնդիրները.

- Գնահատել յուրաքանչյուր սովորողի ուսումնական կարիքները,



- Բացահայտել յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործընթացի խոչընդոտները,
- Վերացնել բացահայտված խոչընդոտները՝ ներագրավելով բոլոր շահագրգիռ կողմերին (ուսուցիչներ, մանկավարժներ, հոգեբաններ, տնօրենություն, ծնողներ, սովորող) ,
- Շարունակաբար բարելավել կարիքների գնահատման, խոչընդոտների բացահայտման և վերացման գործընթացները:

4. Ներառական կրթության սկզբունքները

Ներառական կրթության կազմակերպման հիմնական սկզբունքներն են.

- յուրաքանչյուր սովորող առանձնահատուկ է և արժեքավոր,
- յուրաքանչյուր սովորող իր առանձնահատկություններով նոր փորձառություն է դպրոցի համար, այսինքն՝ լուծումների որոնումը անընդհատ և շարունակական գործընթաց է,
- լուծումներ որոնելու գործընթացում կարևորվում է բոլոր շահագրգիռ կողմերի (ուսուցիչներ, մանկավարժներ, հոգեբաններ, տնօրենություն, ծնողներ, սովորող) ներգրավածությունը և պրոակտիվ մասնակցությունը,
- սովորողի ուժեղ կողմերը, ձեռքբերումները նրա ներառումը ընդլայնելու հիմնական հենակետն են,
- որակյալ կրթության հիմնարար գրավականը դպրոցում ձևավորված փոխվստահության, փոխօգնության, բարյացակամ միջավայրն է,
- ճեմարանում սովորող են բոլորը՝ սաները, աշխատակիցները, ծնողները, որոնց համար հավասարաչափ հասանելի են կրթական գործընթացները, դպրոցի ռեսուրսները և ինքնաիրացման հնարավորությունները,
- ներառական կրթության իրականացման պատասխանատուն ողջ ճեմարանական համայնքն է:

5. Կարիքների գնահատման, խոչընդոտների բացահայտման և հաղթահարման մեխանիզմները, ընթացակարգերը և պատասխանատուները

Ճեմարանի երեք դպրոցներում (կրտսեր, միջին, ավագ) սովորողների ուսումնական կարիքների գնահատման, կրթական գործընթացներում խոչընդոտները բացահայտելու և վերացնելու մեխանիզմները և ընթացակարգերը ընդհանրական են, սակայն միևնույն ժամանակ կան գործընթացային տարբերություններ, որոնք հիմնականում պայմանավորված են սովորողների տարիքային առանձնահատկություններով:



Ներառական կրթության արդյունավետ կազմակերպմանը նպաստում են ճեմարանի հոգեբանական, մանկավարժական, լոգոպեդական, բժշկական ծառայությունները, հոգեբանական հետազոտությունների լաբորատորիան:

Ճեմարանն ունի ներառական կրթության համակարգող և ներառական հարցերով խորհրդատու-մեթոդիստ:

Ճեմարանը համագործակցում է տարբեր կառույցների և առանձին մասնագետների հետ, որոնցից անհրաժեշտության դեպքում ստանում է մասնագիտական և/կամ փորձագիտական կարծիքներ, եզրակացություններ (ինչպես առանձին երեխայի, ընտանիքի, այնպես էլ համընդհանուր գործընթացների վերաբերյալ), մասնագիտական խորհրդատվություններ, սուպերվիզիաներ իր աշխատակիցների համար: Վերջինս իրականացվում է ինչպես աշխատակիցների մասնագիտական աճի, այնպես էլ նրանց հոգեբանական բարեկեցությունն ապահովելու նպատակով:

Բոլոր դպրոցներում սովորողների ուսումնական կարիքների գնահատումը, կրթական գործընթացներում խոչընդոտների բացահայտումն ու վերացումը իրականացվում են ընդունելության, ուսումնառության և գնահատման/ամփոփման փուլերում:

5.1 Ճեմարանի ընդունելության ընթացակարգի բաղկացուցիչ մաս է փաստաթղթերի հավաքագրումը, որը ենթադրում է նաև երեխայի ֆիզիկական, հոգեկան, մտավոր զարգացման վերաբերյալ զանազան փաստաթղթեր, մասնագիտական եզրակացություններ, որոնցում առկա տեղեկատվությունը օժանդակում է երեխայի ուսումնական կարիքները բացահայտելուն, հետևաբար նաև կրթությունը կազմակերպելուն:

5.2 Վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնելուց բացի՝ նոր ընդունված երեխայի ծնողները/խնամակալները պատասխանում են բանավոր և գրավոր հարցումներին, լրացնում են ծնողական հարցաթերթիկներ:

5.3 Ընդունելության, ինչպես նաև նախնական ծանոթության գործընթացում երեխայի մասին համապարփակ տեղեկատվության հիմնական տրամադրողը ծնողներն/խնամակալներն են, որոնք իրազեկվում են այդ տեղեկատվության ճիշտ ներկայացման կարևորության մասին և կնքում են պայմանագիր, որը վերոնշյալը ամրագրող դրույթներ է պարունակում:

5.4 Երեխայի վերաբերյալ ծնողի կողմից դպրոցին տրամադրվող, ինչպես նաև ընթացքում ձեռք բերված տեղեկությունները, մասնագիտական եզրակացություններն ու ամփոփումները պահպանվում են դպրոցի տնօրենի և/կամ հոգեբանական, բժշկական ծառայություններում և հրապարակման ենթակա չեն:

5.5 Քննարկումների և համապատասխան մոտեցումների, հարմարեցումների մշակման նպատակով կիրառվում են վերոնշյալ փաստաթղթերից բխող երեխայի առանձնահատկությունների և ուսումնական կարիքների վերաբերյալ տեղեկատվությունը, որի փոխանցողը հոգեբանական և բժշկական ծառայություններն են: Այդ գործընթացները կազմակերպվում և իրականացվում են ներառական կրթության համակարգողի կողմից:

5.6 Երեխային և նրա ուսումնական կարիքներին նախնական ծանոթության ընթացքում և նպատակով անհրաժեշտության դեպքում դպրոցը



ծնողներին/խնամակալներին ուղղորդում է լրացուցիչ մասնագիտական հետազոտությունների:

5.7 Ընդունելության կամ նախնական ծանոթության փուլում երեխայի ուսումնական կարիքների բացահայտման արդյունքում անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպվել անհատական ուսուցում մեկ և ավելի առարկաներից, եթե երեխայի գիտելիքը, հմտությունները չեն համապատասխանում կամ գերազանցում են տվյալ առարկայի տվյալ տարիքային խմբի ճեմարանական ծրագրի պահանջները:

5.8 Երեխայի առանձնահատկությունների, ուսումնական կարիքների բացահայտումից հետո հրավիրվում են քննարկումներ, համագործակցային ժողովներ, ստեղծվում են աշխատանքային խմբեր, որտեղ դասավանդող ուսուցիչներից, խմբի մանկավարժից և խմբի հոգեբանից բացի՝ տարբեր մասնագետների (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) ներառումը կախված է խնդրի բնույթից:

5.9 Աշխատանքային խումբը ծնողների/խնամակալների հետ համատեղ քննարկում և մշակում է ինչպես ուսումնական, այնպես էլ ծնողավարման մոտեցումներ, ուսումնառության գործընթացի տարբեր հարմարեցումներ, որոնք համապատասխանում են երեխայի առանձնահատկություններին, նպաստում են նրա ներդաշնական զարգացմանը և ուսումնառության կազմակերպմանը:

5.10 Մշակված մոտեցումների և հարմարեցումների կիրառությունը և դրանց արդյունավետության (կամ հակառակը՝ անարդյունավետության) վերաբերյալ հետադարձ կապի իրականացումը պարտադիր են աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի համար. կիրառվում են տարբեր ձևեր՝ նամակագրություն, հաշվետվություններ, հարցումներ, անհրաժեշտության դեպքում նորից կազմակերպվում են քննարկումներ, համագործակցային ժողովներ:

5.11 Քննարկումներ, համագործակցային ժողովներ կազմակերպվում են մանկավարժի, հոգեբանի, դպրոցի ՄԱ-ի նախաձեռնությամբ, ինչպես իրենց, այնպես էլ աշխատանքային խմբի անդամների առաջարկով: Աշխատանքային խմբի կողմից մշակված մոտեցումների, հարմարեցումների իրականացումը համակարգում է ներառական կրթության համակարգողը:

5.12 Անհրաժեշտության դեպքում դպրոցը երեխային ուղղորդում է լրացուցիչ մասնագիտական աջակցման կենտրոններ կամ հրավիրում է աջակցող մասնագետ, որը դառնում է աշխատանքային խմբի անդամ և սերտ համագործակցում է ճեմարանի մասնագետների հետ:

5.13 Ուսումնառության գործընթացի կազմակերպման գործում կիրառվում է ուսումնառության համընդհանուր ձևավորման (UDL) մոդելը, ինչը ապահովում է տարբեր ուսումնական կարիքներ, առանձնահատկություններ, ուսումնառության ոճեր ունեցող սովորողների ներառումը ուսումնական գործընթացում:

5.14 Ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդելի հիման վրա մշակվում են սովորողների ուսումնառության կազմակերպման մոտեցումները: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են իրազեկող սեմինարներ:

5.15 Գնահատման գործընթացների կազմակերպման գործում կիրառվում են տարբեր հարմարեցումներ, որոնք համապատասխանում են սովորողների ուսումնական կարիքներին, առանձնահատկություններին (տե՛ս գնահատման քաղաքականություն):

5.16 Գնահատման գործընթացների հարմարեցումները կարող են վերաբերվել՝

- գնահատման աշխատանքի ներկայացման ձևին (բանավոր, գրավոր).



- գնահատման աշխատանքի ընթացքում կիրառվող միջոցներին (աղյուսակներ, բառարաններ, քանոններ ընթերցելու համար, բարձրախոսներ, ձայնի վերարտադրիչներ և այլն)։
- առաջադրանքի նյութին (տրոհված տեքստ, մեծ տառաչափ, շեղագրով, գունավոր գրված առանձին բառեր և այլն)։
- գնահատման աշխատանքի կազմակերպման ձևին (մենակ, զույգով, խմբով)։
- գնահատման աշխատանքի տևողությանը (հավելյալ ժամանակ)։
- գնահատման աշխատանքի անցկացման և/կամ սովորողի գտնվելու վայրին (խոսողին մոտ դիրքում, առավել լուսավոր հատվածում, շեղող գործոններ նվազագույնս պարունակող վայրում և այլն)։

5.17 Ճեմարանը պարբերաբար կազմակերպում է վերապատրաստումների շարք, որում ներառական կրթությանն առնչվող սեմինարները, աշխատարանները դրանց բաղկացուցիչ մաս են կազմում։ Այդ սեմինարները հիմնականում վարում են ներառական կրթության համակարգողը, հոգեբանական ծառայությունների և լաբորատորիայի հոգեբանները։

5.13 Կարևորելով ծնողի մասնակցությունը և դերը երեխայի ներդաշնակ զարգացման գործում՝ ճեմարանում գործում է ծնողական համալսարան, որի գործունեության նպատակը ծնողավարման վերաբերյալ գիտելիքների հաղորդումն ու տեղեկացվածության ընդլայնումն է։

5.18 Ճեմարանի բոլոր փաստաթղթերը, կարգերը, ընթացակարգերը (ներառյալ նաև ոչ ուսումնական գործընթացներին վերաբերող) մշակվում են՝ հաշվի առնելով տվյալ տարիքային խմբի սովորողների առանձնահատկությունները։

ա. Մանկակրթարան

Աղյուսակը հավելվածում

բ. Կրտսեր դպրոց

Աղյուսակը հավելվածում

գ. Միջին դպրոց

Աղյուսակը հավելվածում

դ. Ավագ դպրոց

Աղյուսակը հավելվածում

6. Օժտվածություն

Ճեմարանն իրականացնում է շնորհալի երեխաների կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների ուսումնասիրման հեղինակային ծրագիրը (գրանցված է Ջեդինակային իրավունքների ազգային գործակալությունում, թիվ 7/13, 01.03.2002թ.):



Ճեմարանի հոգեբանական հետազոտությունների լաբորատորիան միակն է տարածաշրջանում իր ձևաչափով և գործունեության բնույթով:

6.1 Դպրոցի նպատակն է ապահովել այնպիսի միջավայր, որտեղ շնորհալի սաները ոչ միայն չեն կորցնի իրենց ընդունակությունները, այլև կզարգացնեն դրանք, կիրացնեն իրենց ներուժը:

6.2 Լաբորատորիայի նպատակներն են.

- բացահայտել արտակարգ ընդունակություններով օժտված երեխաներին.
- նպաստել նրանց ուսումնադաստիարակչական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը.
- մշակել կրթական մեթոդներ, մոտեցումներ.
- նպաստել սաների ընդունակությունների զարգացմանը:



6.3 Հոգեբանական լաբորատորիայի աշխատանքի հիմնական ուղղություններն են.

- Հետազոտական աշխատանքներ. ուղղված են օժտված սովորողի բացահայտմանը: Ախտորոշիչ աշխատանքները համալիր բնույթ ունեն, իրականացվում է բազմակողմանի և երկարատև ուսումնասիրություն:
- Գործնական աշխատանքներ. ուղղված են ընդունակությունների զարգացմանը: Սա ենթադրում է պարբերաբար քննարկումներ սանի հետ աշխատող բոլոր մասնագետների մասնակցությամբ, համագործակցային հանդիպումներ, դիտումներ, սովորողի առանձնահատկություններին համապատասխան մեթոդների ընտրություն (Տե՛ս հավելված 2): Հաշվի է առնվում ինչպես յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները՝ ուժեղ և թույլ կողմերը, այնպես էլ ուսումնական յուրաքանչյուր առարկայի ոլորտում նրա հմտությունների և գիտելիքների մակարդակը: Մեթոդների ընտրությունը կատարվում է ստացված արդյունքների հիման վրա:
- Խորհրդատվական և լուսավորչական աշխատանքներ.
 - ❖ ծնողների հետ. նրանց ներկայացվում են սանի առանձնահատկությունները, քննարկվում են ծնողավարման մոտեցումները.
 - ❖ ուսուցիչների և մանկավարժների հետ. քննարկվում են առանձին սաների առանձնահատկությունները, ուսումնական ծրագրերի, մեթոդների, մոտեցումների հարմարեցումները: Ուսուցչական, մանկավարժական կազմի հետ կազմակերպում են սեմինարներ, քննարկումներ, կինոդիտումներ օժտվածության թեմայով իրազեկվածությունը բարձրացնելու, ինչպես նաև օժտվածության դրսևորումները նրանց համար ճանաչելի դարձնելու նպատակով:
 - ❖ Օժտված սաների հետ. քննարկվում են հետազոտության արդյունքները, վարքային, անձնային հնարավոր դրսևորումները՝ ինքնաճանաչմանը նպաստելու նպատակով:
- Չարգացմանն ուղղված ծրագրեր. հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակվում են ծրագրեր, որոնք ուղղված են սաների տարբեր հմտությունների, ստեղծարարության, մոտիվացիայի մակարդակի բարձրացմանը:

6.4 Լաբորատորիայի գործունեության հիմքում օժտվածության եռաբաղադրիչ մոդելն է (Ջ. Ս. Ռենգուլի), որի հիմնական սկզբունքների հիման վրա են կառուցվում օժտվածների հետ իրականացվող աշխատանքները՝ բացահայտման, զարգացման, աջակցման փուլերում:



7. Ներառական կրթության քաղաքականության փաստաթղթի վերանայման և շահագրգիռ բոլոր կողմերի համար հասանելի դարձնելու ընթացակարգերը

7.1 Ներառական կրթության քաղաքականության փաստաթուղթը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին:

7.2 Վերանայման գործընթացին մասնակցում են շահագրգիռ բոլոր կողմերը: Համակարգողների խորհուրդը ամբողջացնում է բոլոր դիտարկումները և առաջարկները: Վերանայված փաստաթուղթը հաստատվում է կրթահամալիրի տնօրենի կողմից:

7.3 Փաստաթուղթը տեղադրվում է ճեմարանի կայքում:

7.4 Ճեմարան ընդունված սաների ընտանիքները, ինչպես նաև նորեկ աշխատակիցները փաստաթուղթը նաև ստանում են էլեկտրոնային փոստի միջոցով՝ ճեմարանի նորմատիվային փաստաթղթերի փաթեթի հետ միասին:

7.5 Աշխատակիցների և ծնողների հետ տարեկան հանդիպումները, սեմինարները ներառում են նաև փաստաթղթի վերաբերյալ իրազեկումներ:

8. Գրականության ցանկ

1. Մանուկ խաչատրյան, Միեր Դավթյան, Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ, Չանգակ, Երևան, 2019
2. Candidates with assessment access requirements (Middle years programme), IBO, Geneva, Switzerland, 2015.
3. Candidates with assessment access requirements, IBO, Geneva, Switzerland, 2015.
4. Learning diversity and inclusion in IB programmes, IBO, Geneva, Switzerland, 2016.
5. Meeting student learning diversity in the classroom, IBO, Geneva, Switzerland, 2013.
6. Programme standards and practices, IBO, Geneva, Switzerland, 2014.
7. The IB guide to inclusive education: a resource for whole-school development, IBO, Geneva, Switzerland, 2015.
8. The parallel curriculum. A design to develop learner potential and challenge advanced learners. Carol Ann Tomlinson, Sandra N.Kaplan, Joseph S.Renzulli and others, Second edition, Corwin press, 2019.
9. The schoolwide enrichment model. A how-to guide for talent development, Joseph S. Renzulli, Sally M. Reis, Third edition, Prufrock academic press, 2014.
10. What is an IB education? IBO, Geneva, Switzerland, 2015.



9. Հավելվածներ

Հավելված 1.

Կրտսեր, միջին և ավագ դպրոցներում սովորողների կարիքների գնահատման, խոչընդոտների բացահայտման և վերացման գործընթացներ

Աղյուսակ 1

Մանկակրթարան	Մեխանիզմներ	Ընթացակարգեր	Պատասխանատուներ
Ընդունելություն	Փաստաթղթերի հավաքագրում	Երեխաները ընդունվում են մանկակրթարան՝ ծնողի դիմումի համաձայն և ներկայացնում են անհրաժեշտ և առկա փաստաթղթերը, բժշկական, հոգեբուժական և այլ մասնագիտական փաստաթղթեր:	Կրտսեր դպրոցի մանկավարժական առաջնորդություն (ԿԴՄԱ)



<p>Ուսումնառություն</p>	<p>Նախնական ծանոթացում երեխայի հետ, առանձնահատկությունների, կարիքների բացահայտում</p>	<p>Եթե ընդունելության գործընթացում բացահայտվում է երեխայի զարգացման որևէ խնդիր և/կամ երեխան ունի ախտորոշում, (օր.՝ խոսքի զարգացման հապաղում, վարքային դժվարություններ և այլն) ծնողների /խնամակալների հետ ձեռք է բերվում պայմանավորվածություն երկշաբաթյա դիտարկման համար, որի ընթացքում մանկավարժի, հոգեբանի, լոգոպեդի կողմից դիտարկման արդյունքում գնահատվում են երեխայի կարիքները և նրա կրթության կազմակերպման հնարավորությունը ձեմարանում:</p>	<p>ԿԴՄԱ, ներառական կրթության համակարգող, ներառական կրթության հարցերով խորհրդատու</p>
	<p>Համագործակցային հանդիպումներ</p>	<p>Երկշաբաթյա դիտարկումներից հետո տեղի է ունենում մասնագիտական թիմի համագործակցային հանդիպում, որտեղ քննարկվում են երեխայի կարիքները և համապատասխան ռեսուրսների առկայությունը:</p>	<p>ԿԴՄԱ, ներառական կրթության համակարգող, ներառական կրթության հարցերով խորհրդատու</p>



	<p>Չամազործակցություն կարիքների գնահատման այլ կենտրոնների հետ</p>	<p>Լրացուցիչ հետազոտության անհրաժեշտության դեպքում երեխան ուղղորդվում է կարիքների գնահատման այլ կենտրոններ:</p>	
	<p>Կրթության շարունակականության ապահովում</p>	<p>Երեխայի համար լիարժեք կրթական միջավայր և պայմաններ ապահովելու նպատակով, նաև հաշվի առնելով կարիքների գնահատման արդյունքները, երեխան շարունակում է կամ հաճախել մանկակրթարան, կամ նպատակային ուղղորդվում է այլ հաստատություններ:</p>	<p>ԿԴՄԱ, հոգեբան, լոգոպեդ, ավագ մանկավարժ</p>
	<p>Մասնագիտական աջակցություն</p>	<p>Երեխաների իմացական և վարքային առանձնահատկություններից ելնելով՝ հոգեբանի, լոգոպեդի կողմից իրականացվում է անհատական աշխատանք:</p>	<p>Չոգեբան, լոգոպեդ</p>



	Տարբերակված ուսուցում	Ուսուցումը իրականացվում է տարբերակված՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի գիտելիքների ելքային մակարդակը:	Ավագ մանկավարժ
	Իրազեկում	Պարբերաբար իրականացվում են խորհրդատվություններ ծնողական համայնքի հետ: Նոր ընդունված ուսուցիչները տեղեկանում են հատուկ կրթական կարիք ունեցող սաների հետ տարվող աշխատանքին հատուկ սեմինարների և համագործակցային հանդիպումների ժամանակ:	Ներառական կրթության համակարգող, հոգեբան

Աղյուսակ 2.

Կրտսեր դպրոց	Մեխանիզմներ	Ընթացակարգեր	Պատասխանատուներ
--------------	-------------	--------------	-----------------



<p>Ընդունելություն</p> <p>(Առկա և առցանց ձևաչափ)</p>	<p>Փաստաթղթերի հավաքագրում</p>	<p>Առաջին դասարան կարող են ընդունվել մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը՝ ներառյալ 6 տարին լրացող երեխաները:</p> <p>Ընդունելությունը կազմակերպվում է 2 փուլով. առաջին փուլը նախատեսված է կազմակերպել մանկակրթարանի ավագ խմբի սաների, ճեմարանում սովորող քույր կամ եղբայր ունեցող և ճեմարանի աշխատակիցների երեխաների համար մարտ-ապրիլ ամիսներին:</p> <p>Առաջին փուլից հետո թափուր տեղերի առկայության դեպքում հայտարարվում է մրցույթային ընդունելություն բոլոր ցանկացողների համար:</p> <p>Ընդունելությունը կատարվում է երեխաների՝ դպրոցին հոգեբանական կան պատրաստվածության հետազոտության արդյունքների հիման վրա: (Տես՝ կրտսեր դպրոցի առաջին դասարանի ընդունելության կարգ):</p>	<p>Կրտսեր դպրոցի մանկավարժակա և առաջնորդություն (ԿԴՄԱ)</p> <p>ԿԴ-ի հոգեբանական ծառայություն</p>
---	--------------------------------	--	---



Ախտորոշիչ
աշխատանք

Երեխայի ուսումնական
դժվարութ յունների դեպքում
իրականացվում է իմացական
և հուզական ոլորտի
անհատական ախտորոշիչ
աշխատանք՝ դուրս բերելու
դժվարությունների
հնարավոր պատճառները:
Անհրաժեշտության դեպքում
իրականացվում է իմացական
ոլորտի զարգացնող
աշխատանք:

Յոգեբանական
ծառայություն



	<p>Համագործակցություն և կարիքների գնահատման այլ կենտրոնների հետ</p>	<p>Լրացուցիչ հետազոտության անհրաժեշտության դեպքում էրեխան ուղղորդվում է կարիքների գնահատման այլ կենտրոններ:</p>	<p>ԿԴՄԱ, Ներառական կրթության համակարգող, Ներառական կրթության հարցերով խորհրդատու</p>
	<p>Համագործակցային և հանդիպումներ</p>	<p>Երեխայի ուսումնական դժվարությունների դեպքում իրականացվում են համագործակցային հանդիպումներ դասավանդող ուսուցիչների մասնակցությամբ:</p>	<p>Դասավանդող ուսուցիչներ, ավագ մանկավարժ, հոգեբան</p>
	<p>Մասնագիտական աջակցություն</p>	<p>Լոգոպեդական ծառայությունը հետազոտական աշխատանքներ է իրականացնում դպրոցի բոլոր սաների շրջանում՝ բացահայտելով նրանց բանավոր և գրավոր խոսքում առկա խնդիրները, խանգարումները:</p> <p>Ծնողի համաձայնությամբ և մանկավարժի գիտությամբ պլանավորվում է սանի անհատական աշխատանք լոգոպեդի հետ, որը տևում է մինչև առկա խնդիրների</p>	<p>Հոգեբան, լոգոպեդ Ավագ մանկավարժ</p>



		վերացումը:	
Լեզվի ուսուցում	Լեզվի ուսուցումն իրականացվում է տարբերակված մոտեցմամբ, հաշվի են առնվում սովորողների անհատական կարիքները, ինչպես նաև ուսումնառության ոճերը:	Լեզուներ սովորելու համար բոլոր սաների համար ստեղծվում են հավասար պայմաններ:	



<p>Քննատու</p>	<p>Համագործակցությո ուն հոգեբանական լաբորատորիայի հետ</p> <p>հրազեկում</p>	<p>Հոգեբանական լաբորատորիան օժտված սաների լիարժեք կրթութ յունը իրականացնելու հարցում անհատական խորհրդատվություններ, համագործակցային հանդիպումներ և սեմինարներ է իրականացնում:</p> <p>Նոր ընդունված ուսուցիչները տեղեկանում են հատուկ կրթական կարիք ունեցող սաների հետ տարվող աշխատանքին հատուկ սեմինարների և համագործակցային հանդիպումների ժամանակ:</p>	
-----------------------	--	---	--



		<p>մշակելով համապատասխան նյութեր: (Տես՝ կրտսեր դպրոցի գնահատման քաղաքականություն):</p> <p>Լոգոպեդի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում մասամբ կամ ամբողջությամբ դադարեցվում է սովորողի լեզվական գիտելիքների միավորային գնահատումը: Անհրաժեշտության դեպքում սանի վերոհիշյալ աշխատանքները գնահատվում են լոգոպեդի հետ համատեղ (Տես կրտսեր դպրոցի լեզվական քաղաքականություն):</p>	
--	--	---	--

Աղյուսակ 3

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ	Մեխանիզմներ	Ընթացակարգեր	Պատասխանատուներ
<p>Ընդունելություն (Առկա և առցանց ձևաչափ)</p>	<p>Դիմումների, փաստաթղթերի հավաքագրում</p> <p>(ընթացիկ և ուսումնական տարվա սկզբում, տարեսկզբին)</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փաստաթղթերի հավաքագրում, 2. Հարցազրույցների, թեստավորումների կազմակերպում: 3. ԿԴ-ից ՄԴ տեղափոխվելիս տրամադրվում է տեղեկատվություն սանի ուսումնական և անձնային 	<ol style="list-style-type: none"> 1. Ընդունող հանձնաժողով 2. Առարկայական ամբիոններ, համակարգողներ/ 3. Հոգեբանական ծառայություն



		առանձնահատկությունների մասին խմբի հոգեբանին և մանկավարժին: Անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն է տրվում նաև դասավանդող ուսուցիչներին:	
	Քննությունների կազմակերպում	Ըստ մայրենի լեզվի տիրապետման՝ առարկայական քննական գործընթացը կազմակերպվում է հայերենով կամ օտար լեզվով:	Ընդունելության աշխատանքների համակարգող ,առարկայական ամբիոններ/
	Ընդունակությունների նախնական գնահատում	Մշակույթից անկախ IQ թեստավորում, որն իրականացվում է ինչպես հայերենով, այնպես էլ օտար լեզվով:	Հոգեբանական կենտրոն
	Աջակցություն դիմորդներին	Սեմինար/ուղեցույց քննական սթրեսի հաղթահարման վերաբերյալ	Հոգեբանական ծառայություն
	Հարցազրույցներ	10-րդ դասարանցիների համար հուսքերի ընտրությանը աջակցող գործընթաց:	Ընդունող հանձնաժողով առարկայական ամբիոններ, համակարգողներ/
	Ուսումնասիրվող հուսքերի ընտրություն	Ավարտական քննություններից հետո սանին հնարավորություն է	ՄԲ համակարգող



		տրվում առաջարկվող հոսքերից ընտրել իր կարողություններին և հետաքրքրություններին համապատասխանողը:	
Ուսումնառություն (Առկա և առցանց ձևաչափ)	Ծնողի հետ համագործակցություն	ՄԴ դպրոցում սովորող սաների ծնողներին տարեսկզբում տրվում է ծնողական հարցաթերթ՝ դուրս բերելու սանի անձնային, սոցիալական, վարքային, ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները:	Հոգեբանական ծառայություն
	Ընթացիկ հոգեբանական թեստավորումներ	Տազնապայնության և սոցիոմետրիայի հետազոտություններ	Հոգեբանական ծառայություն/ խմբին կցված հոգեբաններ
	Գնահատում	Անհատական ձևաչափով առանձին սաների հուզական, ճանաչողական, անձնային ոլորտների ուսումնասիրում, դիտում:	Հոգեբաններ/ լոգոպեդներ/ այլ խորհրդատու մասնագետներ/ Գնահատման կենտրոններ/
	Թիմային աշխատանք և փորձի փոխանակում	Համագործակցային հանդիպումներ	Մանկավարժներ/ հոգեբաններ/ ուսուցիչներ/ համակարգողներ
	Փուլային /\$ազային/ ուսուցում	Նախնական գնահատման հիման վրա ձևավորվում են առանձին խմբեր՝ ըստ օտար լեզուների իմացության:	Օտար լեզուների ամբիոն



	Անդրադարձի թերթիկ	Չետադարձ կապի տրամադրում	Ամբիոններ/անհատական ուսուցիչներ/ՄԲ համակարգող
	Անահատական ուսուցում	Ուսումնառության կազմակերպում անհատական ձևաչափով. սանը անհատա կան պարապմունքների ձևաչափով ուսումնասիրում է այն բոլոր առարկաները, որոնք չի կարող խմբի հետ ուսումնառել գիտելիքների բացի կամ լեզվական խնդրի պատճառով: /օր.՝ դրանք ուսումնասիրում է անգլերեն լեզվով/: Այնուհետև, երբ առարկայի իմացության կամ հայոց լեզվին տիրապետելու մակարդակը բավարարում է, միանում է խմբին:	Ամբիոններ/ուսուցիչներ/ տեսչական մաս
	Հարմարեցումներ	Միջավայրի, գործընթացների, ծրագրերի, մեթոդների հարմարեցումներ՝ կարիքներին համապատասխան:	ՀԿԿ համակարգող, համակարգողների խորհուրդ, ամբիոնների ղեկավարներ
	Ամբիոնային հերթապահություն	Սաները, արտաուսումնական ժամերին հաճախելով ամբիոն, հերթապահող ուսուցչի կողմից կարող են ստանալ բոլոր անհասկանալի հարցերի պատասխանները:	Ամբիոնների ղեկավարներ



	<p>Մասնագիտական միջամտություն</p>	<p>Մանկավարժահոգեբանական բնութագրերի, կարծիքների, առաջարկների ներկայացում, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կազմակերպել սանի ուսումնական գործընթացը՝ հաշվի առնելով նրա կյանքի տվյալ փուլի ակտուալ հարցերը, իրավիճակները, անձնային առանձնահատկությունները:</p>	<p>Հոգեբանական ծառայություն/մանկավարժական ծառայություն</p>
	<p>Անհատական ուսուցման պլան</p>	<p>Սանի հետ աշխատող համագործակցային թիմի միասնական աշխատանքի հիման վրա անհատական ուսուցման պլանների մշակում:</p>	<p>ՆԿ համակարգող, համակարգողների խորհուրդ, ամբիոնների ղեկավարներ, գիտամեթոդական կենտրոնի ղեկավար, ծնող</p>
	<p>Իրազեկում</p>	<p>Ուսուցիչների վերապատրաստում, սեմինարների անցկացում:</p>	<p>ՆԿ համակարգող, ՄԲ համակարգող</p>
	<p>Ծնողական համալսարանի կազմակերպում</p>	<p>Ճեմարանի և հրավիրված այլ մասնագետները վարում են թեմատիկ սեմինարներ, հանդիպում-քննարկումներ ծնողական համայնքի համար:</p>	<p>Հոգեբանական կենտրոնի ղեկավար</p>
	<p>Տարբերակված ուսուցում</p>	<p>Ուսուցիչները դասի պլանավորման, դասավանդման մեջ կիրառում են անհատական մոտեցում՝ հաշվի առնելով խմբում սովորող սաների անհատական</p>	<p>13.Համակարգողների խորհուրդ, գիտամեթոդական կենտրոնի ղեկավար, հոգեբանական ծառայություն, հոգեբանական</p>



		առանձնահատկությունները:	լաբորատորիա
	Լեզուների կարուսել	Սանը պարտադիր ուսումնասիրվող օտար լեզվից ամենաբարձր մակարդակի իմացություն դրսևորելու դեպքում կարող է ընտրել և ուսումնասիրել այլ օտար լեզու:	Օտար լեզուների ամբիոնի ղեկավար
	Հեռավար ուսուցում	Որևէ պատճառով (երկրում չգտնվելու, հիվանդության և այլն) առկա ուսուցմանը մասնակցել չկարողանալու դեպքում սանի կրթությունը կազմակերպվում է հեռավար ձևաչափով:	Հեռավար կրթության համակարգող
	Լրացուցիչ պարապմունքներ	Ծնողի դիմումի համաձայն՝ սանը կարող է ունենալ լրացուցիչ պարապմունքներ տվյալ առարկայից խմբում չդասավանդող ուսուցչի հետ:	Ամբիոնների ղեկավարներ
ԳՆԱՀԱՏՈՒՄ	Փուլային գնահատում	<ul style="list-style-type: none"> Ներքին, արտաքին, Կիսամյակային, տարեկան գնահատում: Ձևավորող, միավորային (գնահատման չափանիշների համաձայն) 	Ամբիոնների ղեկավարներ, համակարգողների խորհուրդ



	<p>Ջետադարձ կապի տրամադրում</p>	<ul style="list-style-type: none"> • Անհատական մոտեցման կիրառում հետադարձ կապի թերթիկների միջոցով: • Ծնողների իրազեկում հաշվետվությունների ձևով ուժեղ և թույլ կողմերի դուրսբերմամբ: 	<p>Ուսուցիչներ, ամբիոնների ղեկավարներ</p>
	<p>Գնահատման պայմանների ապահովում՝ ըստ կարիքների</p>	<p>Տարբերակված մոտեցումների հնարվորություն, օրինակ, հավելյալ ժամանակի տրամադրում, բանվոր կամ գրավոր, զեկույց, հետազոտական աշխատանք կամ սահիկաշարի ներկայացում, խմբային կամ անհատական ձևաչափի հնարավորություն: Սաներին հաճախ ըստ հաստատված չափանիշի տրվում է նյութը կամ աշխատանքը ներկայացնելու ձևաչափի ընտրություն:</p>	<p>ՆԿ համակարգող, համակարգողների խորհուրդ, ամբիոնների ղեկավարներ</p>

«Շիրակացու Ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր



	Գնահատման քաղաքականություն	Համեմատական աճի սկզբունքով առաջնորդում	Ամբիոնների ղեկավարներ
--	-------------------------------	---	--------------------------



Աղյուսակ 4

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ	Մեխանիզմներ	Ընթացակարգեր	Պատասխանատուներ
<p>ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ (Առկա և առցանց ձևաչափ)</p>	<p>Դիմումների, փաստաթղթերի հավաքագրում (ընթացիկ տարեսկզբին)</p> <p style="text-align: center;">և</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փաստաթղթերի հավաքագրում, 2. Հարցազրույցների, թեստավորումների կազմակերպում: 3. ՄԴ-ից ԱԴ տեղափոխվելիս տրամադրվում է տեղեկատվություն սանի ուսումնական և անձնային առանձնահատկությունների մասին խմբի հոգեբանին և մանկավարժին: Անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն է տրվում նաև դասավանդող ուսուցիչներին: 	<ol style="list-style-type: none"> 1. Ընդունող հանձնաժող 2. Առարկայական ամբիոններ, համակարգողներ/ 3. Հոգեբանական ծառայություն
	<p>Ընդունակությունների նախնական գնահատում</p>	<p>Մշակույթից անկախ IQ թեստավորում, որն իրականացվում է ինչպես հայերենով, այնպես էլ օտար լեզվով:</p>	<p>Հոգեբանական կենտրոն</p>
	<p>Հարցազրույցներ</p>	<p>ԴՃ Քննությունները հաջողությամբ հանձնաժողի մոդուլները մասնակցում են հարցազրույցների՝</p>	<p>ԴՃ ընդունող հանձնաժողով</p>



		<p>ՄԲԴԾ-ի շրջանակներում իրենց կողմից ուսումնասիրվելիք առարկաներից:</p>	
<p>Քննությունների կազմակերպում</p>		<ul style="list-style-type: none"> ԱՃ-ում քննությունները իրականացվում են, բոլոր ուսումնասիրվող առարկաներից: Դիմորդներին տրվում է վերահանձնելու հնարավորություն: ԴՃ-ում քննությունները 2 առարկայից են՝ մաթեմատիկա, անգլերեն: Ըստ մայրենի լեզվի տիրապետման՝ առարկայական քննական գործընթացի կազմակերպում է հայերենով կամ օտար լեզվով: 	<p>Ընդունելության աշխատանքների համակարգող, առարկայական ամբիոններ/</p>
<p>Ուսումնասիրվող առարկաների ընտրություն</p>		<p>Գիտելիքային շեմը հաղթահարելուց հետո սանին տրվում է հնարավորություն ընտրել իր կարողություններին և հետաքրքրություններին համապատասխան 3 խորացված առարկա և համապատասխան հենքային առարկաներ՝</p>	<p>Տեսչական մաս – ԱՃ ԴՃ համակարգող ?</p>



		<p>ԱՃ-ում: Նմանատիպ սկզբունքով A կամ B մակարդակ՝ ԴՃ-ում</p>	
<p>ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ (Առկա և առցանց ձևաչափ)</p>	<p>Ուսումնական գործընթացի կազմակերպում</p>	<ul style="list-style-type: none"> • Ըստ գիտելիքների մակարդակի, ինչպես նաև գերակայող լեզվի՝ կազմակերպվում է անհատական կամ լրացուցիչ ուսուցում: Համապատասխան ծրագրերից օգտվող սաները մասնակցում են նաև խմբային դասերի՝ սոցիալական շփումներից գերծ չմնալու համար: • Յուրաքանչյուր սան, իր անհատական դասացուցակին և ժամաքանակին համապատասխան մասնակցում է ուսումնական գործընթացին: • Եթե սանը հարգելի պատճառով չի կարող ֆիզիկապես ներկա գտնվել դասապրոցեսին, ապա նրա համար կազմակերպվում է դասապրոցեսին հեռավար մասնակցելու գործընթացը: • Ըստ անհրաժեշտության 	<p>Ընդունելության աշխատանքների համակարգող, առարկայական ամբիոններ, հեռավար կրթության համակարգող, ՀՀ կ համակարգող</p>



		<p>յան իրականացվում է շենքային պայմանների հարմարեցում, օրինակ հարկերում լսարանների տեղափոխություն և այլն:</p>	
	<p>Պարբերական դասալսումներ, դիտումներ</p>	<ul style="list-style-type: none"> ● Ուսումնական նյութի մատուցման, սաների ընկալման, կրթական գործընթացի բարելավ ման նպատակով: ● Սաների ինտեգրման, միջանձնային հարաբերությունների, նյութի ընկալ ման դիտարկումների նպատակով: ● Նոր ընդունված ուսուցիչ ների ինտեգրման, հետադարձ կապի, աջակցության նպատակով: 	<p>Գիտամեթոդական կենտրոնի ղեկավար, ամբիոնի վարիչներ, մանկավարժներ, հոգեբաններ, հոգեբանական լաբորատորիա</p>



	<p>Ուսուցիչներից, մանկավարժներից, սաներից, ծնողներից հայցեր`</p> <ul style="list-style-type: none"> - հուզական, վարքային դժվարությունների վերաբերյալ - գիտելիքների յուրացման, բացթողումների վերաբերյալ - առողջական խնդիրների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> • Չայցի դիտարկում, համապատասխան փաստաթղթերի դիտարկում, վերլուծություն, ուղղորդում հավելյալ հետազոտությունների: • Սաներին վերաբերող բոլոր տեղեկությունները մնում են բժշկական և հոգեբանական ծառայությունների սահմաններում. պահպանվում է գաղտնիության սկզբունքը: • Ուսուցիչները ստանում են դասի ընթացքին առնչվող ընդհանրական տեղեկություններ` սաների հետ արդյունավետորեն աշխատելու համար: Օրինակ, եթե սանը ունի հուզական, վարքային կամ կրթական գործընթացին լիարժեք ներգրավվելու այլ դժվարություններ այդ մասին տեղեկանում են երեխայի հետ աշխատող ուսուցիչները, համագործակցային 	<p>Գիտամեթոդական կենտրոնի ղեկավար, ամբիոնի վարիչներ, մանկավարժներ, հոգեբաններ, հոգեբանական լաբորատորիայի աշխատակից, բժշկական ծառայություն:</p>
--	--	--	--



Ժողովների,
տեղեկատվական
նամակների և
համապատասխան
ցուցումների միջոցով:
Համագործակցային
խումբը, կազմում է
աշխատանքների
անհատական պլան:
Յուրաքանչյուր
այդպիսի ընթացք
գնահատվում է՝
մշակված պլանի
արդյունավետությունը
փաստելու
նպատակով: Այս
ձևաչափը աշխատում
է և՛ առանձին սաների,
և՛ խմբի պարագայում:

- Եռակողմ՝ ծնող-սան-
ուսուցիչ/մանկավարժ,
ծնող- սան- հոգեբան
ձևաչափով
քննարկումներ:
- Սաների ուսումնական,
դաստիարակչական
որոշումների
կայացման
նպատակով դպրոցի
տնօրենության կողմից
հոգեբանների
ներգրավվում,
համապատասխան
բնութագրերի, սանի
տարիքային և
անձնային
առանձնահատկություն
ների տրամադրման
և դրանք հաշվի

«Շիրակացու Ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր



առնելու նպատակով:



	<p>Ուսուցիչների շրջանում հարցումների իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> Առանձին սաներ, խմբերի ուսումնական, վարքային դժվարությունների, առանձնահատկությունների դուրսբերում: Օժտված սաների մասին հավելյալ տեղեկատվության հավաքագրում: 	<p>Մանկվարժներ, հոգեբաններ, հոգեբանական լաբորատորիայի աշխատակից</p>
	<p>իրազեկում</p>	<p>Պատասխանատու ծառայություններ իրականացնում ծնողների, աշխատակազմի տարաբնույթ հանդիպումներ՝ սեմինարներ, քննարկումներ, անհատական հանդիպումներ խորհրդատվություն:</p>	<p>Գիտամեթոդական կենտրոնի ղեկավար, ամբիոնի վարիչներ, 344 համակարգող, հոգեբաններ, հոգեբանական լաբորատորիայի աշխատակից,</p>
<p>ԳՆԱՀԱՏՈՒՄ</p>	<p>Փուլային գնահատում</p>	<ul style="list-style-type: none"> Ներքին, արտաքին, Կիսամյակային, տարեկան գնահատում: Ձևավորող, միավորային (գնահատման չափանիշների համաձայն) 	<p>Առարկայական ամբիոններ/ համակարգողներ, ուսուցիչներ</p>



	<p>Հետադարձ կապի տրամադրում</p>	<ul style="list-style-type: none"> • Անհատական մոտեցման կիրառում հետադարձ կապի թերթիկների միջոցով: • Ծնողների իրազեկում հաշվետվությունների ձևով ուժեղ և թույլ կողմերի դուրսբերմամբ: 	<p>Առարկայական ամբիոններ/ համակարգողներ, ուսուցիչներ</p>
	<p>Գնահատման պայմանների ապահովում՝ ըստ կարիքների</p>	<p>Տարբերակված մոտեցումների հնարավորություն, օրինակ, բանվոր կամ գրավոր, զեկույց, հետազոտական աշխատանք կամ սահիկաշարի ներկայացում: Հաճախ ըստ հաստատված չափանիշի՝ սաներին տրվում է նյութը կամ աշխատանքը ներկայացնելու ձևաչափի ընտրություն:</p>	<p>Առարկայական ամբիոններ/ համակարգողներ, ուսուցիչներ, ՀԿԿ համակարգող</p>



ԿԱՊԸ ՄՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒ ՆՆԵՐԻ ՀԵՏ	Լեզուների քաղաքականություն	Ավագ դպրոցում դասավանդվող բոլոր լեզուների միասնական և հորիզոնական պլանավորում	առարկայական ամբիոններ/ համակարգողներ
	Գնահատման քաղաքականություն	Համեմատական աճի սկզբունքով առաջնորդում	Առարկայական ամբիոններ/ համակարգողներ, 344 համակարգող

Հավելված 2

Ռենգուլիի մեթոդով սաների ընդունակությունների զարգացմանն ուղղված մեթոդի ընտրություն՝ մաթեմատիկա առարկայի օրինակով: Յուրաքանչյուր մակարդակը ներառում է գիտելիք, հմտություններ, վերաբերմունք, մտածողության ոճ habits of mind:

Սանի գիտելիքների և հմտությունների մակարդակը	Բնութագիրը	Ցուցվող մեթոդները
Novice	<ul style="list-style-type: none"> • Կիրառում է դիսկրետ մաթեմատիկայի հմտությունները, բայց թերանում է կոնցեպտուալ հասկացումից, ըմբռնումից: <ul style="list-style-type: none"> • Ճանաչում է սկզբունքները, բայց չի կարողանում կիրառել միևնույն չիռնել: • Արդյունավետ հաշվարկում է, բայց սահուն չէ: • Սահմանափակ հարբերություններ է տեսնում թվերի և թվային համակարգերի միջև: • Ճանաչում է միայն 	<p>Հիմնական մոտեցումը՝ համագործակցային հանձնարարություններ՝ ներառող նյութերով և գաղափարներով մանիպուլյացիաներ, իսկ հետո՝ միևնույն դասերի միջոցով շարժվել դեպի ուղիղ հրահանգներ պարունակող հանձնարարություններ՝ զարգացնելով ինքնուրույնությունը:</p> <p>Մոտեցումներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հավասարումների վիզիուալիզացիա 2. Իրական աշխարհը բացատրել մաթեմատիկայով 3. Մանկական գրականություն



	<p>ամենահիմնական օրինաչափությունները:</p> <ul style="list-style-type: none"> • Կարիք ունի հաճախակի հետադարձ կապի և աջակցման խնդրի լուծման ընթացքում: • Ճիշտ պատասխանը դիտարկում է որպես նպատակ: 	<p>օգտագործել մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրությունը բարձրացնելու համար</p> <ol style="list-style-type: none"> 4. Ներկայացնել մաթեմատիկայի մասնագետների տարբեր ազգերից 5. Օգտագործել մետակոգնիտիվ վերլուծություններ՝ շեշտադրելով խնդրի լուծման ընթացքը, այլ ոչ թե մրցակցությունը կամ ճիշտ պատասխանը: <p>Մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Process Logs and exit tickets 2. Kaplan's Frame of the Discipline 3. Cooperative learning 4. Concept-Based Curriculum (Erikson's Model) 5. Wasserman's Play-Debrief-Replay 6. Kaplan's Depth and Complexity Dimensions 7. Centers for Hands-On Exploration 8. Think alouds 9. Mind Mapping 10. Concept Mapping 11. Mini Lessons
<p>Apprentice</p>	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափությունների միջոցով կապում է մաթեմատիկական փաստերի և հմտությունների միջև փոխհարաբերությունները: • Հաշվարկում է սահուն և տալիս է հիմնավոր գնահատականներ: • Կիրառում է հմտությունները վստահորեն և զարգացնում է թվերից և գործողություններից վեր, ավելին հասկանալու կարողությունը: • Կապեր է գտնում մաթեմատիկական գաղափարների միջև: • Հասկանում է ոլորտի սկզբունքները՝ չափումներ, հանրահաշիվ, երկրաչափություն, 	<p>Հիմնական մոտեցումը խրախուսելն է մարտահրավերներ վերցնելը և առաջադրանքներ կատարելը, որոնցում չկան կրկնօրինակման մոդելներ:</p> <p>Մոտեցումներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Օգտագործել հանձնարարություններ ամբողջ խմբի, փոքր խմբերի և անհատական կատարման համար: 2. Տալ հատուկ հետադարձ կապ՝ օգտագործելով տվյալների վերլուծության և վիճակագրության ժամանակակից մեթոդներ: 3. Տալ անհատական հետադարձ կապ և ինքնավերլուծության հնարավորություն՝ օգնելով կենտրոնանալ սխալ ընկալված նյութերի, թերացումների վրա՝ խրախուսելով աճը, հմտությունների զարգացումը:



	<p>վիճակագրություն:</p> <ul style="list-style-type: none"> • Չարգացնում է հմտությունները և ըմբռնումը՝ բարդ, համակարգային խնդիրների լուծման միջոցով: • Դնում է նպատակներ, որոնք հաշվարկային ճշգրտությունից այն կողմ են: 	<ol style="list-style-type: none"> 4. Աջակցել սովորողին համապատասխան ձև ընտրելիս: 5. «Fuzzy» առաջադրանքներում աջակցություն: 6. Օգտագործել մաթեմատիկական հասկացությունները այլ առարկաներում՝ երաժշտություն, գիտություն, ճարտարապետություն և այլն: <p>Մեթոդներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Real world Investigations 2. Wasserman's Play-Debrief-Replay 3. Rubrics 4. Process Logs 5. Orbitals 6. Performance Tasks 7. Kaplan's Frame of the Discipline 8. Group Investigation 9. Mini Lessons 10. Think Alouds
<p>Practitioner</p>	<ul style="list-style-type: none"> • Օգտագործում է մաթեմատիկայի սկզբունքները, օրինաչափությունները, որպեսզի կապեր ստեղծի մաթեմատիկայի տարբեր ոլորտների հասկացությունների միջև: • Համապատասխան ընտրություն է կատարում, թե որ գործիքը կամ մեթոդը կարելի է կիրառել: • Հասկանում է օրինաչափությունները, հարաբերությունները, գործառույթները: • Հմտությունները կիրառում է ավտոմատ: • Հասկանում է փոփոխությունները տարբեր համատեքստերում: • Մաթեմատիկական իրավիճակների վերլուծության ընթացքում արդյունավետորեն օգտագործում է տարբեր գործիքներ և մեթոդներ: 	<p>Հիմնական մոտեցումը պետք է լինի կիրառելի սովորողակենտրոն, հետաքրքրությունների վրա շեշտադրված դասացվանդումը: Կիրառվում են նաև mentorship, job shadowing, apprenticeship: Ուսուցիչը պետք է լինի Facilitator.</p> <p>Մոտեցումներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Որակական և քանակական հետազոտությունների վերլուծության հնարավորութ յուն տալ: 2. Նմանատիպ մոդելները օգտագործել նոր խնդիրներում: 3. Ոլորտում անպատասխան խնդիրները տրամադրել սովորողին մտածելու համար: 4. Կապ հաստատել ոլորտում նույն մակարդակում կամ հաջորդ մակարդակում գտնվող անձանց հետ: 5. Թույլ տալ հնարավորությունը և ռեսուրսներ տրամադրել փորձարկելու մաթեմատիկական կանոնները, տեսությունները:



	<ul style="list-style-type: none"> • Գնահատում է այլ ոլորտներում մաթեմատիկայի դերը: • Ձևակերպում է հետազոտական հարցեր, որոնք մաթեմատիկայի մեկ կամ մի քանի ոլորտներից են: 	<p>Մեթոդներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Անհատական ուսուցում 2. Kaplan's Frame of the Discipline 3. Simulations 4. Internships and Apprenticeships 5. Partnerships with mentors 6. Socratic Seminat or Paidea
<p>Expert</p>	<ul style="list-style-type: none"> • uses computation as merely a means to an end • կասկածի տակ է առնում առկա մաթեմատիկական սկզբունքները. • հեշտությամբ շարժվում է մաթեմատիկայի բնագավառների մեջ մակրոհասկացությունների օգտագործման միջոցով. • իրական խնդիրների միջոցով կապում է մաթեմատիկական սկզբունքները այլ ոլորտների հետ. • որոնում է չլուծված խնդիրների մարտահրավերներ և գոյություն ունեցող թեորեմների փորձարկումներ. • seeks flow through the manipulation of tools and methods in complex problem solving • դիտում է մյուս ոլորտների անպատասխան հարցերը մաթեմատիկայի հասկացությունների միջոցով. • օգտագործում է վերլուծությունը և փորձը որպես ինքնակատարելագործման գորիքներ. • Տեսնում է թերի գեղեցկությունը և փնտրում է հնարավորությունն աշխատել բարդ խնդիրների շուրջ: 	<p>Ջետազա աճ ապահովելու հնարավորություններ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Մաթեմատիկայի դասեր վարել: 2. Մտքեր փոխանակելու կամ հետադարձ կապի նպատակով տպագրության հնարավորություն: 3. Համագործակցել տարբեր ոլորտների մասնագետների հետ: 4. Նախագծել և իրականացնել հետազոտություններ՝ գոյություն ունեցող տեսությունները փորձարկելու համար: 5. Չարգացնել մաթեմատիկական մոդելները և բացատրությունները՝ իրական աշխարհի իրավիճակների և ֆենոմենների համար: 6. Օգտագործել մաթեմատիկական հասկացությունները հետազոտական խառնատեսույթներ անելու համար՝ հիվանդության տարածման, անօթևանության, թռչունների միգրացիայի և այլն: 7. Հիմնադրամների ֆինանսավորման որոնում՝ հետազոտություններ իրականացնելու համար: